

338


9-13

ԸՆԿԵՐԱՅԻՆ ՎԵՐՔԵՐ

1. ԻՆՉՈՒ ՄԱՐԴԻԿ ԵՐԶԱՆԻԿ ԶԵՆ
2. Ո՞Վ, Է ՊԱՏԱՍԽԱՆԱՑՈՒՆ
3. ԽՐԱՌ ՇՈԳԵՆԱԽԻԾ
4. ԱՆՈՓ ԲԱՆՏԱՐԿՈՒԱԾՈՒ
5. ՎՃՏԱԿԻՐ ՀԱՅՐԵ
6. ԻՆՉՋԵ ԿՐՈՆԵ
7. ԱՊԱԴԱՑ ՄԵՐՈՒՆԴԻԾ
8. ՔՐԻՎՏՈՆԵԿՈՒԹԻՄԻՆ ԹԵ ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՄԻՆ
9. ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՄԻՆ



Կ. ՊՈՂԻՄ
ՊՈԽԹԻԿԱՆ Օ. ԱՐՁՈՒՄԱՆ
1911



338
9-13
ԿՐՈՆ Մ. ԶԱԳԵՐԵԱՆ

25 SEP 2006

07 FEB 2010

ԸՆԿԵՐԱՅԻՆ ՎԵՐՔԵՐ

1. ԻՆՉՈ՞Ւ ՄԱՐԴԻԿ ԵՐՉԱՆԻԿ ԶԵՆ
2. Ո՞Վ, Է ՊԱՏԱՍԽԱՆՈՂՈՒՆ
3. ԻՐԱԾ ՀՕԳԵՆԱՍԻԼ
4. ԱՆՈՒԲ ԲԱՆՏԱՐԿՈՒԱԾԸ
5. ՎՇՏԱԿԻՐ ՀԱՅՐԸ
6. Ի՞ՆՉ է ԿՐՕՆԸ
7. ԱՊԱԳԱՅ ՍԵՐՈՒՆԴԻԸ
8. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՆ ԹԷ ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ
9. ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ



Կ. ՊՈՂԻՄ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ. Օ. ԱՐՅՈՒՄԱՆ
1911

16 JUL 2013

28574

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ



Հնկերային վէրքերը , կենդանի իրողութիւններ են ,
և այդ իրողութիւններէ թերադրուած կը ձեռնարկենք
այս դոյզն գործին , յուսալով թէ յառաջիկային կարող
անձեր , իրենց լուրջ և մանրամասն երկերով , աւելի յատա-
կօրէն պիտի պարզեն տառապող մարդկութեան ցաւերը ,
նաև գործնական թերադրութիւններ պիտի ընեն զանոնք
դարմանելու համար :



45367-64

I. ԻՆՉՈ՞Ւ ՄԱՐԴԻԿ ԵՐԶԱՆԻԿ ԶԵՆ

Նիւթական այս տիեզերքը իր հիմնալի ներդաշնաւ-
կութեամբ յարմար միջավայր կը հանդիսանայ ապրող
մարդկութեան : Ծովերը , լեռները , ամպերը դաշտերը ,
և ամէն ինչ որ տեսանելի է , մասնաւոր հմայքով մը ,
մեր երջանկութեան նպաստելու ընոյթն ունի : Սակայն
մարդիկ երջանիկ չեն , և այս ապերջանկութեան զիսաւոր
պատճառները , շատ պարզ և ծանօթ են ամէնուն :

Նախ անիրաւութիւնը իր այլազան ձեւերով կը խանգարէ մարդուն երջանկութիւնը . սա շատ բնական իրողութիւն մըն է : Էնտաննեկան նոյն յարկին ներքեւ ապրող երկու փոքրիկ աղեկներ , անոնցմէ մեծը , որ ըստ ինքեան զօրաւոր է . Կ'առնէ . կը յափշտակէ իր պղտիկ եղբօր ձեւքին մէջ գտնուած մի աննշան առարկան , և այսպէս անոր սիրալ կոտրելով կը խանգարէ անոր անմեղուկ երջանկութիւնը : Հոս անիրաւութիւնը իր նախնական ձեխն մէջն է . որ ընկերային զանազան յարաբերութիւններուն մէջ զգալսապէս մէծնալով , և քաղաքային տուեւարական ընտանեկան ելն . բարդ հանգամանքներ առնելով , սուկայի աւելներ կը գործէ ընկերութեան մէջ :

Ամուսնութիւնը՝ ընտութեան մի օրէնքն է , որ կենդանական և բուսական ամէն ինչ իր գոյութիւնը պահելու համար անոր հետքերը կը ցուցնէ : Մարդն ալ բնութեան այդ ընդհանուր օրէնքին հետեւելով , անհատը իր յարմար տարիքին մէջ կը գանէ իր մտափիպար ընկերը , և անոր հետ կենակցելով կ'ունենան զաւակներ , որոնց գոյութիւնը կը նպաստէ անոնց երջանկութեան : Եւ սակայն զեղծումը . յարաբերական այս կենակցութեան

մէջ, որպի՛սի տուներ կը քանդէ, և ի՞նչ մեծ աւերներ կը գործէ լայն շրջանակին մէջ ասպականերով ընկերութիւնը և խանդարելով անհատներու երջանկութիւնը ... գործիս անձկութեան բերմամբ չեմ կրնար մանրամասնութեան մտնել այս մասին, և սակայն ուշիմ ընթերցողը իր ծանօթութեան աստիճանին համեմատ կրնայ իր յիշողութեան մէջ կարդալ այն կենդանի վէպերը. որոնց ինք ականատես եղած է իր փորձառական կեանքին մէջ :

Մարդոց երջանկութիւնը խանդարող կայ երրորդ չարիք մըն աղ որ ակներեւ կը աենառուի ամէն տեղ և ամէն դարու մէջ. այն է . . . մարդիկ իրարու հետ կենակցերու արուեսը յեն զիտեր: Կը աենառ խոշոր գործարան մը որուն մէջ զետեղուած մեքենական գործիքները հեշտիւ կը գործեն. որովհետեւ ամէն տեղ որ շփում կայ, այդ շփումը մեղմացներու համար պէտք եղած չափով խեղ դրուած է հոն: Սուանց այս վերջոյն, վիժնարի անիւները պիտի դադրէին դառնապէ, և կամ պիտի դառնային զիրար ուտելով. և մեքենական այդ կազմածքին մէջ խանդարում և մեծ աւերներ գործերով: Մարդկային ընկերական մեքենային զրութիւնը շատ աւելի բարդ է ո և է արհեստական մեքենայի զրութենէն, հետեւարար մարդիկ աւելի կարօտ են լուրջ և շրջանայեաց կենցաղավարութեան, և իրաւամբ կրնանք ըսել թէ ճշմարիս աղմուռեթիւնը քաջութենէ նախամեծար է, աղ եկած է ժամանակը, որ մարդիկ սորվերու են իրարու կենակցերու արուեստը, և աղ վերջ տալու են այն անիմասս հակառակութիւններու և մնանմէջ կուիներու, որոնք ուրիշ բանի չեն ծառայել բայց եթէ մարդոց երջանկութիւնը խանդարելու:

2. Ո՞Վ Է ՊԱՏԱՍԽԱՆԱՑՈՒՆ

Մարդիկ ի բնէ սխաղական են: Եւ սակայն կան թշուաներ որոնց վիճակը և արտաքին պարագաները վիրենք աւելի սխաղական և հետեւապէս յանցաւոր կ'ընէ: Եւ յանցաւորներու համար սահմանուած են օրէնքներ, բանտեր, շղթաներ են: Բայց ո և է յանցաւորը պատմելու համար հարկ է նկատի առնել սա պարագան թէ գործուած այդ յանցանքին մէջ բուն այդ յանցաւորին պատսախանասուութեան բամինը որչա'փ է:

Կաթէն նոր կարուած աղեկ մը, եթէ զայն առնելով տաս ճարոնական մի ընաանփքին. տասն սարեկան հասակին մէջ անիկա պիտի խօսի անվրէպ ճարոներէն լիզուն. նաև իր բարը չարմուճեւերուն և նիստուկացին մէջ պիտի արտայայտէ ճարոնական բարքերը: Սոր նման և ասոր չափ ստոյդ իրովութիւն մըն է. թէ այն տղաք, որ կը ծնին ու կը մեծնան բարոյապէս անմաքուր միջավացրերու մէջ և զորկ կը մնան մի ինամոց և առողջ դաստիարակութենէն. իրաց բնական ընթացքով. անոնք իրենց վրայ ցոյց պիտի տան իրենց ծնած ու մնած միջավացրին յոտի բարքերը. նաև անոնք յաճախ պիտի ենթարկուին Օրինաց խատութիւններուն:

Սակայն մարդիկ եթէ արդար ըլլային իրենց դատովութեան մէջ որոշակի պիտի աենանէին սա լուսայաց իրովութիւնը, թէ անոնց ձեռքով գործուած ո և է չարիքին մեծագոյն պատսախանասուութիւնը կը ծանրանայ մարդկացին ընկերութեան վրայ. քանի որ այս վերջինը ժամանակին թերացած է և տակաւին կը թերանայ նոյն այդ միջավացրերը մաքրելու և բարուռքելու իր շատ վեճ պարտականութեան մէջ:

3. ԽՐԱԾ ՇՈԳԵՆԱՒԾԸ

Սնդվական հսկայ շոգենաւ մը John Morrison անունով Պոլայ Սարայ Պուլնուցի առջեւ խրած կը մնայ մինչեւ ցայսօր . քանի անգամներ որ այդ շոգենաւը տեսներու առիթը կ'ունենամ . ախուր իրողութիւններու յիշասամները կը ճնին երեւակայութեանս մէջ : Կը խորհմ թէ այդ մեծ շոգենաւը ունէր անշուշա իր փորձառու նաւապետը . և ծովու ամէն հաւանականութիւններու դէմ զինք վարելու միջոցները . և սակայն հակառակ այս ամէնուն ամիկա խրեցաւ հոն աւագին մէջ , որովհետեւ այդ օրուան փոթորիկը շատ մեծ էր :

Նախորդ հաստուածին մէջ յիշեցինք թշուաները , որոնք կը ճնին ու կ'ապրին բարոյապէս ապականուած միջավայրերու մէջ , և ճակատադրականօրէն կ'երթան կը բարդուին ընկերութեան ինկած ու սատրին խաւերուն վրայ : Այս անգամ ապակայն մաքուր միջավայրի զաւակն է որ կիյնայ ինկածներու այդ յոտի մակարդակին և պատուաւոր մարդիկ կը տեսնեն անոր խորտակուած նկարագրին բեկորները . բայց միեւնոյն ատեն չեն տեսներ և կամ չեն ուզեր տեսնել փորձութեան այն մեծ փոթորիկը որ առիթ տուած է այդ բարոյական նաւաբեկութեան . . . :

4. ԱՆՈՔ ԲԱՆՏԱՐԿՈՒԱԾԸ

Բարեկամ մը որ ոչինչ խնդրոյ մը համար քասան և չըրա ժամ միայն բանստարկուած էր . պատմեց մարդու մը վրայ , որ սա բանսի տուած սովորական հացէն զատ չունէր բան մը : Չունէր նաև դուրսէն ծանօթ մը կամ բարեկամ մը որ իրեն օգնէր նիւթապէս : Եւ քանի որ մարդս միայն հացով չապրիկ . ուստի սա հարկադրուեցաւ ծախել յաւածիկաց երեք ամիսներուն մէջ իրեն տրուելիք բանսի սովորական ուոճիկը և սկսաւ ծառայել ասոր և անոր աւելցած չոր հացի բեկորներու փոխարէն . որոնցմանվ կը յուսար ապրիկ իր բանստարկութեան շրջանին մէջ :

Այս մարդը օր մը եթէ բանսէ ելլայ . և ի վիճակի ըլլայ հարուստի մը դրամը գողնալու , կը կարծէք թէ ետ պիտի կենայ իր այդ յաջող արարքէն . հարուստին վիճակին վրայ արդահաստիով : Ոչ երբեք . Անիկա քէն ունի բոլո՞ր մարդկութեան դէմ : Եւ ինչպէս կրնայ գութ և կարեկցութիւն ցոյց տալ այս կամ այն անհատին . երբ ըսոր մարդիկ իր մասին անգութ և անտարբեր գանուած են իր բանստարկութեան տաժանելի ու երկար շրջանին մէջ : Շատ պարզ և նոյն տաեն ցաւալի իրողութիւն մը զոր չենք կը մարտար

5. ՎՇՏԱԿԻՐ ՀԱՅՐԸ

Սւետարանի այն առակը որ ծանօթ է Անսառակին անունով . կեանքի շատ բնական մի տեսարանը կը պարզէ :

Հոն պղտիկ եղբայրը կ'ըմբոտանաց իր հօրը դէմ, կ'առնէ իր բաժինը և կ'երթայ հեռուները : Ալ հայրը իր այդ զաւկի մասին ո և է լուր մը չառներ . սակայն իբրև փորձառու մարդ . շատ լաւ գիտէ թէ իր անփորձ զաւակը շուտով պիտի վասնէր իր ունեցածը և պիտի իշխար յետին աստիճանի թշուառութեան մէջ : Հետեւաբար հօրը, այդ աղնուական մարդուն, երջանկութեան ճրադր մարած էր : Թերեւս ամէն տուն ո և է բան մը չէր ըսեր իր այդ զաւկին նկատմամբ, սակայն հօրենական ներքին կարեկցութիւն մը, խանդակաթ սէր մը . զինք կը տանչէր ամէն օր : Ընտանեկան նոխ սեղանը և համազամ կերակուրները ալ կորուսած էին իրենց հմայքը : Հանդիսառ մաքուր անկողինը փուշ մըն էր իրեն համար : Որովհետեւ ամէն անգամ որ զանոնք՝ պիտի վայելէր . Կորուսեալ զաւկին սէրը . և անոր թշուառութեան իրականութիւնը նոր և աւելի ուժգին թափով մը կուգային տանջել իր վշտացեալ սիրած : Կ'անցնեն երկար տարիներ . և անա օր մը, երջանիկի օր մը, հեռուէն կը նըշմարէ իր հոգիին սիրածը, որ մաշած երեւոյթով մը յամրաքայլ կուգար դէս իրեն : Կը վազէ անոր ընդառաջ . կարօտագին կը համբուրէ զանիկա . և իր ծառաներուն տուած նոր նոր հրամաններով կ'ուզէ արտայացել իր հրամուանքը :

Երեց ու հնազանդ եղբայրն . որ բոլորովին անզիտակ էր օրուան եղելութեան իրիկուան դէմ . ագարակէ վերաբարձին երբ կը մօտենայ իր հօրինական տան . կը լսէ

նուագարաններուն ձայնը, և կը տեսնէ մեծ եռուզեր մը ծառաներուն մէջ . կը հարցունէ ծառաներէ մէկուն . և սա կ'աւետէ անոր թէ եղբայրդ եկաւ . և հայրդ պարարտ զուարակը մորթեց անոր համար : Կ'արժէ հոս լրջօրէն նկատի առնել երեց եղբօր հոգեբանութիւնը : Ան ըստին հարազատ խմասով չեր պիրեր իր եղբայրը : Հետեւաբար անոր տունէն հնուացումը իրեն աւելի նպաստաւոր եղած էր : Նակատակ իր այդ ծանօթ առաքինութեան, որ երկար ատեն իր հօրը հնազանդ մնաց . անիկառնէր սիրտ մը . ոն անզութ սիրտ, որ բնաւ կարեկցիլ չէր զիւէր : Խիստ էր իր զատաստանը իր յանցաւոր եղբօր մասին . և կը պարաւէր իր հայրը, պիտ ու անիրաւ զաներով անոր այդ օրուան արարքը : Մեծ անպատճութիւն մը կը նկատէր ինկած մը իրեն եղբայր զաւանիլը, անոր համար կ'ըսէ իր հօրը, երբար եկաւ այդ ժու որդիի որ քու բոլոր հարատութիւնդ անսաւակութեան մէջ սպառեց, անոր պարարտ զուարակը մորթեցիր ...

Ի՞նչ տիտուր պատկեր . որքան սև նկարագիր :

6. Ի՞ՆՉ Է ԿՐՕՆԸ

Կարծիքները շատ կը տարբերին ի մասին կրօնի կարեւորութեան : Ուսանոք զայն կը պատուեն մեծ յարգանքներով . և ուրիներ անոր գոյութիւնը ընկերութեան մէջ վիսակար նկատելով կը պայցարին անոր դէմ : Սրգար ըլլալու համար պարտինք խոսանովանիլ թէ յանուն կրօնի շատ չարիքներ գործուած են . սակայն այդ չարիքներուն ամրողութիւնը ծագում առած են կրօնի մասին

մարդոց սիսալ ըմբռնումէն : Հետեւաբար կ'արժէ հոս
հարցունել թէ ի՞նչ է Կրօնը . և որուն կը պատասխանենք
այսպէս . Կրօնն է այն ներքին ու վսեմ յարաբերու-
թիւնը , որ անհատը իր Սրարշն կը միացունէ , և յար-
մար կ'ընծայէ զայն իր ընկերային շըջանակին . մէջ իրեւ
մարդ ապրելու :

Եթէ մէկը երկար ատեն ուսումնասիրէ չորս աւե-
տարաններու առանձները ու վարդապետութիւնները :
Վերջապէս պիտի գայ սա որոշ եղբակացութեան . թէ
անոնք կը շեշտեն այնպիսի բան մը , որ ըստ ինքեան
շատ կենասական է և կարեւոր : Այն է . Կորսուածին արժէիլ .
«Սցապէս մեծ ուրախութիւն կ'ըլլաց երկինքը մէկ մե-
զաւորին համար որ կ'ասպաշարէ» : Կրօնի շեշտած այս
վսեմ վարդապետութիւնը . մարդիկ տակաւին չեն բմբանած
ըստ արժանույն : Յիրաւի շատեր կը պարծենան արդի
քաղաքակրթութեան զարգացումին վրայ : Ամէն կոզմ
կը տեսնուին վիթխարի չէնքեր . յարդարուած փողոցներ ,
և փայլուն տեսարաններ : Եւ սակայն մարդիկ կը տառա-
պին . այո՛ կը տառապին բառին էն լայն առումով : Ան-
հատ մը որ կ'ինայ , ալ անիկայ ինկած է վերջնական
կերպով . ալ զսորի է նաև պատիւէ հանդիսատէ ու արժա-
նիքէ , թէեւ տակաւին մարդ մըն է . բայց մարդու արժէք
չունի . բարոյապէս մեռած մը որ իր մեզանչող ու յան-
ցաւոր մարմինը քաշկուելով կ'երթայ անցուառութիւնէ ան-
յուսութիւնն : Հոս է ահա Կրօնի . գործնական Կրօնին .
վսեմութիւնը : Ան կ'ըսէ . Զգուշացէք այդպիսները ա-
նարդել . և ըրէք ամէն ինչ զոր կրնաք ընկել . անոնց վե-
րականգնութիւնն համար : Յիրաւի . սիսական մարդու վե-
րանորոգման վարդապետութիւնը Քրիստոնէական Կրօնի
յատկանին է : Այդ Սր . Կրօնի Հեղինակը , մեղաւորնե-
րու բարեկամն էր . և շատ կենդանի օրինակներ կ'ար-

դարայննեն վերանորոգման այդ մեծ վարդապետութեան
բանաւորութիւնը : Եւ անգամ մը որ Կրօնը այսպէս լա-
ւագոյն արդիւնքներ ընծայէ զինք դաւանողներու ան-
կեղծ գործունէութեամբ . Կրօնի մասին կարծիքներու
տարրերութիւնը պիտի վերնայ : Եւ այդ պիտի նկատուի
իրեւ մարդոց փրկիչը :

7. ԱՊԱԳԱՅ ՍԵՐՈՒՆԴԸ

Փորձով տեսնուած է թէ արդի քաղաքակրթութիւնը և
անոր բազմակողմանի պոհանջումներն , մեծապէս սատա-
րած են հեւանդութիւններու զարգացման : Եւ որչափ
ձգտումներ ըլլան նահապետական կեանքի վերադառ-
նալու , իրազութիւնը սա է թէ մարդիկ աստիճանական
քայլերով աւելի պիտի յառաջանան քաղաքակրթութեան
մէջ : Եւ հետեւապէս աւելի պատեհ առիթներ պիտի
ստեղծեն տեսակ մը բարդ հիւանդութիւններու գոյու-
թեան : Բայց քանի հիւանդութիւնները յառաջ երթան .
անոնց հետ պայքարելու համար անդին կայ բժշկու-
թեան արուեստն ալ , որ զգապի քայլերով կ'ընդարձակէ
իր գիտութեան և գործունէութեան շըջանակը :

Քաղաքակրթութեան արդի զարգացումը միեւնոյն
արդիւնքը տուած է նաև ինկած բարոյականի տեսակէ-
տով ալ : Շատ մը գործունէայ պատանիներ իրենց հօրե-
նական կամ լաւ ես է ըսել կիսանահապետական յարկերը
թողով հարկադրուած են գալ ու հաստատովի մեծ քա-
ղաքներու մէջ : Սակայն հակառակ այս մեծ քաղաքնե-
րու արհեստական շքեղութեան . հոն անոնք բարոյականի
չափանիշը շատ վար գտած են իրենց բմբանած բարոյա-

կանչն։ Փորձութեան հսկայ ալիքը և ելեքտրական հոսանքի նման համակած է իրենց ամբողջ էռութիւնը, և այսպէս շատ յուսալից երիտասարդներ կարծ ատեն միայն հազիւ պահելով իրենց թշուառ գոյութիւնը։ աշնան տեսրեւներու նման գարո՛ւն տարիքներու մէջ վերջ տուած են իրենց կորոյի կեանքերուն։

Հետեւաբար, պատուաւոր և լուրջ դասակարգի հաւաքական մարմինը ահաւոր պատասխանատութիւն մը ունի մարդկութեան ինկած ու մորորած դասակարգը բարւոքելու տեսակէտով։ Ոմնո՞ք այնպէս կը կարծեն թէ բաւական մեծ պատուար մը կայ հաստատուած պատուաւոր ու անսպատիւ երկու տարրեր դասակարգերուն մէջ, թէ յարաբերութիւնները խապառ խպուած են վերջններուն հետ։ և, աւերող չարիքը սահմանափակուած է չարերու անձուկ սահմանին մէջ միայն... Երանի թէ այդ միամիտ կարծիքը շիտակ ըլլար. ստկայն կենդանի իրողութիւնը հակառակ ու ցաւալի արդիւնքներ կուտայ... Ուստի քաղցր է մեղ յուսալ թէ գէթ ապագայ սերունդը աւելի որոշ պիտի տեսնէ այս կենսական պէտքը և յանուն կրօնի ու ճշմարիտ քաղաքակրթութեան ի մէջ այլոց պիտի հիմնուին նաև ընկերութիւններ. մարդասիրական ու միջազգային խոշոր ու վիթխարի ընկերութիւններ, որոնք մասնաւոր առաքելութիւններով պիտի աշխատին բանտարկուածներու և բարոյապէս ինկածներու վիճակը բարւոքելու նուիրական դաշտերուն մէջ։

8. ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆ ԹԷ ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ

Մանօթ բառերու նախապաշարումը թող չխանգարէ մեր դասողութեան կշիռը, Քրիստոնէութիւնն և Ընկերվարութիւնը ասոնք սկզբունքով իրարու ներհակ չեն, և երկուքն ալ շատ կամ քիչ չափով մը կը շեշտեն միեւնոյն իրողութիւնը, թէ կան թշուառներ և անհրաժեշտ հարկ մըն է դարմանել անոնց այդ թշուառ վիճակը։ Իրական չարիքը այդ երկուքն մին կամ միւր սիսականալուն մէջ է։ Որքան պարզ էր Յիսուսի որդեգրած սկզբունքը։ Անիկա բովանդակ մարդկութիւնը իրեկ մի մարմին նկատեց. մարմին մը որուն առողջութիւնը խաթարուած էր մահառիթ վէրքերով։ Որոշակի մատնացոյց ըրաւ այդ վէրքերը, և ընկերային խրստներ խօսեցաւ զանոնք դարմանելու մասին։ Նաև ինք անձամբ խիստ ոճով մը խայտառակեց կեղծիքն ու կեղծարարներն։ Ողորմութիւնը, ինկածներու և մորորածներու հանդէպ բարեացակամ վերաբերումը, զոներկ զերադաս հոչակերով, ամենափսրին կարեկցութեամբ մը արդահատեցաւ այդպիսիներու խեղճ վիճակին վրայ. և սիրայօժար ամձնուակմանը կնքեց իր Սուաքերութիւնը։ Եւ սակայն այդ կրօնի հետեւողներէ ոմանք, երբեմն չունեցան նոյն կարեկցով սիրաը. և սիսակ հասկցողութեամբ իր խիստ-թեան հակասող առարկը ձեւ մը առւին կրօնաընկերային այն ազնիւ դրութեան։

Այսպէս նաև ընկերվարութիւնը իր նախական արթնութեան մէջ տեսառ թշուառները, և զինք կազմակերպեց անոնց վիճակը բարւոքերու մեծ ձեռնարկին։ Այդ փրկարար բանակի գոյութեան պէտքը զգալի եղաւ ընկերութեան մէջ։ Միայն թէ անոնք որ կ'անդամակցին

այդ կազմակերպութեան . ունին արդեօք այդ նուի-
րումը . և թշուառներու վիճակը բարելաւելու . ժամա-
նակի միջավայրի և ժողովրդավիճն ըմբռնումներու խակու-
թիւնը ձշգերու մասնագիտական հմտութիւնները : Ըսկե-
րային վէրքերը , կարծուածէն շատ աւելի խորունկ են
և մահառիթ . և հետեւապէս անոնք որ առանց նուիր-
ման և առանց բաւական հմտութեան ափ յափոյ կը
ձեռնարկեն զանոնք գարմաններու այդ փափուկ գործին .
այդպիսի սխալ գարմանումներու հետեւանքները յա-
ձախ աղիտագեր կ'ըլլան :

Շատ ցաւափի է նաև տեսնել թէ մարդիկ իրարու կը
կը հակուակին առանց բանաւոր պատճառներու . ուրիշ
խօսքով զիւրաց չեն հասկեար : Միջին դարը եղբայրա-
պան կուններու և արիւնահեղ պատերազմներու երկար
շջան մը կը գծէ գաւառնաբանական այս կամ այն հարցի
շուրջ : Արդի քաղաքակլիւթութեան ալ ներելի չեն այդ
կունները : Երկու եղբայրներ , ասոնց մին աղաստական և
միւսը պահպանողական կընան ըլլալ : Ասոնք իրենց հա-
կասական կարծիքներով երբեք չեն դադրիր եղբայր ըլ-
լլալէ : Եւ բացարձակ յիմարութիւն է յուսապ աղազայի
մը գոյութեան , որուն մէջ բոլոր մարդիկ համակարծիք
պիտի գտնուին : Որչափ մարդիկ այնչափ կարծիք նոյն
պիտի մնայ ամէն դարու մէջ : Եւ կարծիքներու այդ
տարբերութիւնը իր բաւագոյն կողմերն ունի : հերիք է
որ բոլոր մարդիկ ի սրտէ գաւանին ընկերային համատա-
րած եղբայրութեան վեհագոյն դաւանանքը . և կարելի-
ութեան սահմաններուն մէջ գործեն վիրար երջանիկ ընե-
լու ազնիւ տրամադրութիւններով :

9. ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Վերջին խօսքը զոր կ'ուզեմ արտասանել , սա է թէ
մարդիկ կը տառապին . հաղարաւորներ կան որոնց այսօր-
եայ վիճակը իրապէս թշուառ է . և ասոնք մեզի մօտ ,
մեր մէջ . մեր հարազատ եղբայրներն են : Եւ այսօր մեր
եղբայրները . վաղն ալ գուցէ մեր փափկասուն զաւակ-
ները մեր աղիմները պիտի վարակուին ընկերային թըշ-
ուառութեան այն լայնածաւալ համաձարակէն : Հետեւա-
բար կրօնը քաղաքակլիւթութիւնը . արուեստը և զարգա-
ցումը . ի մի բան , ընկերային հաւաքական բոլոր ուժերը
միանան , և կարելիութեան սահմաններուն մէջ միջոցներ
սաեղծեն ինկածները բարւոքելու ընկերային այդ վեր-
քերը , գարմաններու համար :

Յիրաւի շատեր հաւատք չեն ընծայեր անոնց վերա-
նորդգման , անոնք բարոյապէս ինկածներ են . կ'ըսեն ,
եթէ վերցունես , անոնք նորէն կ'իյնան : Շատերու այս
համոզումը կը նմանի աղտատ մարդուն փիլտրիայու-
թեան , որ չը լուար իր շապիկը , տարեկելով թէ անիկա
նորէն պիտի աղտատի : Լուայայատ իրտութիւնը սա է թէ
մարդիկ ինկածները դատապարտերու կամ բամբասերու
դիրքէն շատ վեր . զանոնք բարելաւերու վսեմ ու եղ-
բայրական պարտաւորութիւնը ունին , և , երբեք ներելի
չէ մոռնապ . թէ այդ քայքայուած նկարագիրներու ող-
բարի տակակներուն տակ . ինչ աղնիւ ու մաքուր սիր-
տեր . գութի՛ կարեկցութեան ինչ լաւգոյն զգացումներ .
ինչ մեծ կարելիութիւններ պահուած են : Չարերն ալ ի
ծնէ մարդ են , և տակաւին մարդու նևան կրնան խորհի
ու գործել . նաև իրեւ փորձառու անհատներ ուրիշներէ
տեկի օգտակար կրնան հանդիսանապ ընկերային այս կամ


այն շրջանակներուն մէջ : Միսիոնար մը յանուն այս ինչ
ընկերութեան թող ներկայացնայ բանտի մը . հնա իրազեկ
ըլլայ իւրաքանչիւր բանտարկուածի յանցանքին ու կա-
ցութեան , խրատէ , յորդորէ և նիւթական աջակցու-
թեամբ դիւրացունէ անոնց կենցաղն բանտի մէջ ու
բանտէ դուրս , անոնք պատուոյ սահմանին մէջ կրնան
շնել իրենց դիրքերը . ու ապրիլ մարդու նման : Լուրջ
և տարիքը առած , իսկապէս պատուաւոր , անձերէ բաշ-
կացեալ յանձնախումբ մը , մարդասիրական այս ինչ ըն-
կերութեան անունով թող այցելէ հանրասառները : Հնա
այդ ապականուած վայրերուն մէջ ծանօթանայ մէն մի
ինկածի խոկական կացութեան և կենաագրականին . լրջօրէն
հարցունէ անոնց թէ գո՞հ են իրենց վիճակէն . և չե՞ն
ուզեր ազատի մահաշուք այդ մխորէն : Եւ եթէ հաս մը
միայն կարենանե ազատել , միեւնոյն ատեն ազատած պիտի
ըլլան նաև անոր ապագայ զսերը : Թող որ նուիրական
այդ ձեռնարկին գործադրութիւնը , յաջողութեան լաւա-
գոյն արդիւնքներով պիտի պատկուի :

Կաթուածանարը , թոքախտաւորը . և նոյն իսկ յո-
շերայէ վարակուածը մինչեւ վերջին ժամերուն մարդիկ
կը յուսան և կ'աշխատին դարմանել :

ԻՆԿԱԾԲ ԻՆՉՈՒԻ ԶՐԿՈՒԻ ԴԱՐՄԱՆՈՒՄԷ...

Քննկերային վերերը . փոքրիկ այս տետրակը թող
նուիրուի տարաքաղդ հոգիներու այդ սրտառուչ դասին ,
և իր անձուկ էջերը վկայ հանդիսանան զանոնք բարե-
լաւելու տիեզերական պէտաքին :





«Ազգային գրադարան



NL0193492

28574

W